հնարաւորութիւն գտնէի անձամբ վերստուգել, լուսանկարել, յատակագծեր ու հատուածականներ կազմել, ես չէի յանձնել այս գործս մամուլին մինչեւ այդ բոլորը կատարելը. բայց այժմ ես ծերացած, դրամից զուրկ եւ որ ամենագլխաւորն է հնարաւորութիւն չկայ Հայի համար մտնել ՃԱ-ը եւ ուսումնասիրել: Ահա այս պատճառով մատնացոյց եմ անում ուրիշներին գծագրածս ուղին բռնել եւ առաջ գնալ: Մանաւանդ որ պեղումների համար մեծ գումար է հարկաւոր, այդ էլ կարող է կատարել որ եւ է Ակադեմիա, Համալսարան կամ Թանգարան: Թող այս ուրուագիծն առաջնորդէ նրանց դիտութեան զարգացման ծառայելու:

Ես տալիս եմ առանց քաշուելու միայն ունեցածս, տեսածներս եւ լսածներս: